# ՀՀ սոցիալ-տնտեսական դրությունը և հասարակական-քաղաքական կյանքը

### *դ. 1920 թ. Մայիսյան ապստամբությունը*

*Մայիսյան ապստամբությունը Հայաստանի բոլշևիկների զինված ելույթն էր Հայաստանի Հանրապետության իշխանությունը տապալելու և խորհրդային կարգեր հաստատելու համար:*

*Իշխանության հարցը Հայաստանի բոլշևիկները դրել էին իրենց կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսում: Իշխանության «բռնի հեղափոխական տապալումը» կոնֆերանսը համարում էր կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը: Հեղափոխության ժամանակի ընտրությունը կապվում էր «Արևելքի ընդհանուր ապստամբության պահի» հետ՝ նկատի ունենալով Թուրքիայի, Պարսկաստանի ու Արևելքի այլ երկրների ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարը միջազգային իմպերիալիզմի դեմ և Արևելքի ապստամբ ժողովուրդների օգնությամբ Խորհրդային Ռուսաստանի հետ ընդհանուր ճակատ կազմելը: Առաջադրված խնդիրը կրկնվում էր նաև Մայիսյան ապստամբության պարտությունից հետո՝ 1920 թ. հուլիսին կայացած Կոմունիստական ինտերնացիոնալի երկրորդ համաժողովին Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցչի ներկայացրած զեկուցման մեջ: Փաստորեն Հայաստանում կոմունիստների իշխանության գալու հնարավորությունը պայմանավորվում էր միջազգային նպաստավոր պայմաններով և ոչ թե ներքին գործոններով, կամ, ավելի ճիշտ, շեշտը դրվում էր արտաքին հանգամանքների և Ռուսաստանի աջակցության վրա: Հայաստանի աշխատավոր դասակարգերի ազատագրության հարցը հենց ազգային–դաշնակցական ճնշման դեմ պայքարելու միջոցով լուծելու տեսակետն էր իր աշխատություններում զարգացնում Հայ մարքսիստ–տեսաբան Ս. Կասյանը:*

*Սակայն Հայաստանում հեղափոխության կազմակերպումը վրա հասավ այլ իրադրության առաջացման կապակցությամբ: Խոսքը Ռուսաստանի խորհրդային իշխանության քաղաքացիական կռիվներում վճռական հաղթանակների, Անդրկովկասի սահմաններին կարմիր բանակի մոտենալու և Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման մասին է: Հայաստանի բոլշևիկները կամ նրանց մի մասը նոր իրադրությունը համարեցին հենց այն պահը, որ ակնկալում էին ապստամբության համար: Նոր իրադրության պայմաններում նշանակալի էր մայիսմեկյան տոնակատարությունը՝ համաշխարհային բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների համերաշխության օրվա նշումը: Արհեստակցական միությունների միությունը, որը ՀՅԴ ազդեցության տակ էր, մշակել էր տոնակատարության ծրագիր: Ըստ ծրագրի՝ մայիսի 1-ին բոլոր աշխատավորները շարքերով դուրս էին գալու ցույցի՝ կարմիր դրոշակներով ու կարգախոսներով «Կեցցե՛ ազգերի համերաշխությունը», «Անկախ և միացյալ Հայաստանի աշխատավորությունը ողջունում*

182 Կասեան Ս., Չախուբեան հիվանդութիւնը մեզանում (Նոր աշխարհ, Թիֆլիս, 1922, թիվ 2, էջ 11): Հայ ժողովրդի պատմություն (ՀԺՊ), հ. 7, Երևան, 1967, էջ 79:



*է մայիսի 1-ի մեծ տոնը», «Ամբողջ իշխանությունը աշխատավորությանը», «Կեցցե՛ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը և գյուղացիությունը»: Ցուցարարներն իրենց հետ տանելու էին Կ. Մարքսի, Ք. Միքայելյանի, Ս. Շահումյանի, Ս. Զավարյանի, Լ. Աթաբեկյանի և Ռոստոմի նկարները: Ճառախոսները ցուցակագրվելու էին նախապես՝ իրենց ելույթներում բացառելով բանավեճը: Տոնակատարության կազմակերպիչ հանձնաժողովի ծրագիրն ավարտվում էր կոչերով «Կեցցե՛ Մայիսի 1-ը, միջազգային պրոլետարիատի մեծ տոնը», «Կեցցե՛ բոլոր ազգերի աշխատավորների համերաշխությունը», «Կեցցե՛ սոցիալիզմը»[183]:*

*Սակայն, ծրագրին հակառակ, տոնակատարությունն անցավ ոչ միասնական շարքերով ու ոչ միակամ: Բոլշևիկները ցույցի դուրս եկան առանձին շարասյուներով և առաջադրեցին հակապետական–հեղափոխական կարգախոսներ:*

*Ըստ ՀԺԿ «Ժողովուրդ» պաշտոնաթերթի՝ Երևանում տոնը նշվեց «արտակարգ պայմաններում», երբ ակնառու էր «կոմունիստների եռանդուն և բացարձակ գործունեությունը»: Խորհրդարանի շենքի առջև կայացած «մեծ միտինգում» նրանք հանդես եկան «ուլտրասոցիալիստական ճառերով», «Կորչի՛ ներկա կառավարությունը», «Կեցցե՛ Խորհրդային Ռուսաստանը» կոչերով: Արտահայտվել էին նաև սոցիալիստական մյուս կուսակցությունների ներկայացուցիչները: Թերթի կարծիքով՝ տվյալ «քաղաքական պահին» մայիսի 1-ը Հայաստանում չպետք է տոնվեր կամ հակառակ դեպքում «ոչ այդպիսի ձևով», քանի որ «դաշնակցականների անհեռատեսության» պատճառով թույլ տրվեցին «բոլշևիկների բազմաթիվ հակապետական քայլեր», երբ «փաստորեն մայիսի 1-ը դարձավ, ինչպես պետք էր սպասել, կոմունիստների ագիտացիայի օր»: ՀՅԴ-ի նկատմամբ ընդդիմադիր աջակողմյան ժողովրդական կուսակցությունը առիթն օգտագործեց մի անգամ ևս քննադատելու կառավարող կուսակցությանը, իսկ ինքը, ինչպես հայտնում էր թերթը, չմասնակցեց տոնակատարությանը[184]:*

*Տոնակատարությունը բոլշևիկների համար առավել ուժգին անցավ Ալեքսանդրապոլում: Դրան նպաստեց այն հանգամանքը, որ բոլշևիկների ազդեցության տակ անցան «Վարդան Զորավար» զրահագնացքը՝ կապիտան Սարգիս Մուսայելյանի հրամանատարությամբ, և քաղաքի զինվորական կայազորի զգալի մասը: Բոլշևիկների ազդեցությունն ուժեղ էր երկաթուղային բանվորների շրջանում, հատկապես դեպոյում: Այնտեղ գործում էին մի քանի կուսակցական բջիջներ: Տոնի առթիվ բոլշևիկների՝ Ալեքսանդրապոլի կոմիտեի արձակած կոչում մայիսի 1-ը դիտվում էր «միջազգային կոմունիստական պրոլետարիատի ու նրա կուսակցության կռվի ու հաղթանակի օր»: Ձեռք մեկնելով Ադրբեջան մտած ռուսական կարմիր բանակին ու Բաքվի պրոլետարիատին՝ նշվում էր, թե այսուհետև իրենց կռիվը ոչ թե թուրք բանվորի ու գյուղացու, այլ դաշնակցական կառավարության դեմ է, և մոտ է վերջինիս տապալման օրը[185]:*

*Նույն օրը Ալեքսանդրապոլի ցույցի անունից Արշակ Գաբունցի և Ավիս Նուրիջանյանի ստորագրությամբ ողջույնի հեռագիր հղվեց Ադրբեջանի հեղկոմին, որով ադրբեջանական մուսավաթականների դեմ տարած հաղթանակը համարում էին նաև իրենց հաղթանակը: Իսկ ինչպես նշվում է նույն այդ հեղկոմին հասցեագրած երկրորդ ողջույնի հեռագրում, ակնկալելով նրանից պարենային օգնություն, այդ մասին դրական պատասխան ստանալու դեպքում «մենք, անհապաղ գրավում ենք իշխանությունը»: Ադրբեջանի խորհրդայնացման առթիվ ողջույնի հեռագիր էր ուղարկել նաև Հայաստանի կոմիտեն՝*

183 Տե՛ս Առաջին ծասսայական–հեղափոխական շարժումները Հայաստանում..., էջ 271–272:

184 Տե՛ս Ժողովուրդ, 9 մայիսի, 1920: Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում..., էջ 272–273:

185 Տե՛ս Առաջին մասսայական–հեղափոխական շարժումները Հայաստանում..., էջ 273–274:

նչելով, թե «թևավորված այդ հաղթանակով» հավատում են, որ մոտ է հաղթանակը նաև իրենց մուսավաթականների՝ դաշնակցականների կառավարության դեմ:

Մայիսմեկյան ցույցեր տեղի ունեցան նաև Ղարաքիլիսայում (Վանաձոր), Սարիղամիշում և այլ վայրերում: Դրանք ցույց տվեցին, որ բոլշևիկների հետևից գնում է բնակչության և զորքի (գյուղացիության) որոշ մասը: Հայաստանի կոմիտեի հիշյալ զեկուցման մեջ հավաստվում էր, որ մայիսի 1–ին իշխանությունը գրավելու խնդիր չէր դրվում, սակայն արդեն պարզ էր, «որ այդ հարցը ամենամոտ ապագայի հարցն է հանդիսանում: Այդ ուղղությամբ տենդային աշխատանք սկսվեց», և կուսկազմակերպությունները դրվեցին «ռազմական դրության մեջ»:

Մայիսի 2–ին Թիֆլիս մեկնեց Հայաստանի կոմիտեի ներկայացուցիչը՝ դրության մասին կովկասյան կոմիտեին զեկուցելու և Ս. Կասյանին ու Ա. Մռավյանին հրավիրելու համար:

Հաջորդ օրը Երևանում Հայաստանի կոմիտեն գրավոր տեղեկացավ Ալեքսանդրապոլի իրադարձությունների մասին: Տվյալ զեկուցումը, իր հակասություններով հանդերձ, Հայաստանի կոմիտեի վրա թողեց «տարօրինակ տպավորություն»: «Ելույթի տարբերայնությունն ու անկազմակերպվածությունն արդեն երևում են հենց այն բանից,– հայտնում էր կոմիտեն,– որ նրանք իրենք էին գրում, թե «առավոտյան այդպիսի հաջողություն չէինք սպասում»»: Պարզ էր, եզրակացնում է Հայաստանի կոմիտեն, որ եթե նրանք մայիսմեկյան ցույցի հաջողության հույս չէին ունեցել, ապա առավել ևս չէին կարող հուսալ իշխանությունը գրավելու հաջող ու կազմակերպված ելույթի համար:

Ավելին՝ Հայաստանի կոմիտեն նաև հավատացած էր, որ Ալեքսանդրապոլի հաջողությունը չէր կարող կայուն լինել, որ անհրաժեշտ էր ամենուրեք համաձայնեցնել բոլշևիկների գործողությունները, լինել կապված, այլապես անջատ–անջատ ելույթները կհանգեցնեին ուժերի փոշիացման և անխուսափելի պարտության:

Ելնելով այդ ամենից՝ Հայաստանի կոմիտեն պաշտպանում էր հետևյալ մարտավարությունը. ապստամբության ազդանշան տվողը լինելու էր Ղազախը՝ Խորհրդային Ադրբեջանին մոտ գտնվելու և ռուսական կարմիր բանակի օգնությունն ակնկալելու բերումով: Այդ որոշման մասին տեղյակ պահելով Ալեքսանդրապոլի կոմիտեին՝ Հայաստանի կոմիտեն նրան առաջարկել էր «սկսած գործը անհիվանդագին կերպով լիկվիդացիայի ենթարկել՝ ըստ կարելույն, կամ գոնե ձգձգել»: Նշանակում է, որ Հայաստանի բոլշևիկների ղեկավար մարմինը իր ենթակա մարմիններից պահանջում էր դադարեցնել զինված ապստամբության սկսած գործը և նախապատրաստությունը կամ ձգձգել այն: Դրա նպատակը հասկանալի է. Հայաստանի կոմիտեն ձգտում էր ապահովելու ապստամբության իր մարտավարությունը՝ Ղազախից սկսելու առաջնությունը:

Իսկ Ալեքսանդրապոլում ապստամբության գործը արագացնում էին տեղորեն: Հաշվարկելով այն հնարավորությունը, որ շարժումը կհանդիպի ձերբակալությունների, ահաբեկությունների, զինաթափման և այլ հակազդեցությունների՝ Ա. Նուրիջանյանը Հայաստանի կոմիտեին իր ստորագրությամբ ուղարկած նամակներում (մայիսի 3 և 5) տալիս է նաև պատասխանը, թե այդ դեպքում պետք է ընդունել մարտահրավերը և գրավել իշխանությունը: «Ձեր որոշումը նախ սկսել Ղազախում և հետո այստեղ, և այն էլ դեռ կապ հաստատել և ապա հանդես գալ,– շարունակում է Ա. Նուրիջանյանը,– համարում եմ հիմնովին սխալ: Նախ պետք է գրավել և ապա առաջ շարժվել: Եվ առաջինը՝ պետք է սկսենք Ալեքսանդրապոլում, որտեղից մենք կսկսենք Ղազախի վրա շարժվել»[186]:

[186] Առաջին մասսայական–հեղափոխական շարժումները Հայաստանում..., էջ 285:



Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեի ամբողջ գործունեության ընթացքում իշխում էր Ա. Նուրիջանյանի և կոմիտեի այլ անդամների խիստ ծայրահեղ՝ «ուլտրահեղափոխական», փաստորեն արկածախնդրական մոտեցումը իշխանության գրավման հարցում: Ինչ վերաբերում է իշխանությունը գրավելուց հետո այն պահելու կարևորությանը, ապա այդ հարցը ալեքսանդրապոլցիներին բնավ չէր մտահոգում ինչպես մինչև բուն ապստամբությունը, այնպես էլ դրա ընթացքում:

Հայաստանի կոմիտեն, տեսնելով, որ գործ ունի կատարված փաստի հետ, որոշեց միջամտել և շարժմանը տալ կազմակերպված բնույթ՝ այն պահելով մինչև Երևանի և մյուս վայրերի ելույթները: Ալեքսանդրապոլ մեկնեցին Հայաստանի կոմիտեի ներկայացուցիչներ Դրաստամատ Տեր–Սիմոնյանը և Արտաշես Մելքոնյանը: Մայիսի 7–ին Ալեքսանդրապոլում՝ «Վարդան զորավար» զրահագնացքում, կայացավ բոլշևիկների ընդլայնված խորհրդակցություն՝ ժամանած ընկերների, Ալեքսանդրապոլի կոմիտեի անդամների ու գավառի շրջանների և այլ վայրերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Որոշում ընդունվեց միաժամանակ Ղազախից և Ալեքսանդրապոլից ապստամբություն սկսելու մասին: Այնուհետև հաղթանակած ապստամբ ուժերը շարժվելու էին դեպի Երևան, որտեղ, սակայն, ապստամբություն չէր նախատեսվում: Կազմակերպվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ), որի անդամներն էին Արշակ Գոգունցը, Ա. Նուրիջանյանը, Ս. Մուսայելյանը, Աշոտ Տեր–Սահակյանը, Պետրոս Պետրոսյանը, Գևորգ Սահակյանը, Դ. Տեր–Սիմոնյանը և Ա. Մելքոնյանը (վերջին երկուսը ներկայացնում էին Հայաստանի կոմիտեն): Զինված ուժերի (կարմիր զորքերի) հրամանատար նշանակվեց զրահագնացքի պետ կապիտան Ս. Մուսայելյանը: Ապստամբության և իշխանության մարմիններ (ՌՀԿ–ներ) կազմակերպվեցին նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ–Դիլիջանում, Սուրմալուում և այլ վայրերում: Հայաստանի կոմիտեն ներկայացուցիչ ուղարկեց Ղազախ՝ միաժամանակյա ելույթն ապահովելու համար: Հայաստանի ՌՀԿ–ն կառավարությունից պահանջում էր հանձնել իշխանությունը:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետության իշխանությունները միջոցառումներ ձեռնարկեցին հակապետական ելույթները կանխելու և ճնշելու համար: Մայիսի 5–ին հրաժարական տվեց Ա. Խատիսյանի կառավարությունը, որին փոխարինեց Հ. Օհանջանյանի բյուրո–կառավարությունը՝ որդեգրելով կոշտ քաղաքականություն: Խորհրդարանը դադարեց գործելուց՝ իր լիազորությունները փոխանցելով կառավարությանը (ինչպես դա կատարվել էր անցյալում): Ընդունվեց օրենք արտակարգ դատարաններ կազմակերպելու մասին: Պետական դավաճանության, ապստամբության և այլ հանցանքների համար սահմանվեցին խստագույն պատիժներ՝ մահապատիժ, ցմահ տաժանակիր աշխատանք և այլն: Լրացուցիչ օրենքով արտակարգ դատարանի դատին ենթակա էին նաև նախորդ օրերի (ապրիլի 15–ից հետո) հանցագործությունները[187]: Երկրի կառավարումը կենտրոնացնելու նպատակով խոշորացվեցին վարչատարածքային միավորները, գավառները միավորվեցին 4 նահանգների մեջ՝ իրենց նահանգապետներով: Կառավարության միջոցառումները պաշտպանեցին բոլոր հասարակական կազմակերպությունները և քաղաքական կուսակցությունները, բացառությամբ, բնականաբար, բոլշևիկների: Պետության շահերն էր պաշտպանում նաև եկեղեցին: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն ժողովրդին կոչ արեց զգաստության, միության ու համագործակցության, համախմբվելու օրինասահման կառավարության շուրջ, գիտակցելու, որ երկրին սպառ-

[187] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 632, էջ 273–274: ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162, թ. 1–2:

թյան սկիզբը՝ այն տարածելով մյուս շրջաններում: Մինչդեռ Դիլիջանի գավառը տեղից չշարժվեց այն ժամանակ, երբ շարժումը սկսվել ու ճնշվել էր: Դիլիջանի գավառը, սահմանակից լինելով Խորհրդային Ադրբեջանին և ռուսական կարմիր բանակի զորամասերի տեղակայմանը, նպաստավոր պայմաններում էր գտնվում ակտիվ գործողություններ ծավալելու համար: Դրանով էր պայմանավորված նաև այդտեղ ապստամբական շարժման տևական բնույթը: Դիլիջանի գավառային ՌՀԿ–ն կազմակերպվեց մայիսի 12–ին՝ Շավարշ Ամիրխանյանի նախագահությամբ: ՌՀԿ–ներ ունեին նաև շրջանները (Դիլիջան, Քարվանսարա (Իջևան), Շամշադին), Ճամբարակի ենթաշրջանը և բազմաթիվ գյուղեր: Մայիսի 13–ին գավառային ՌՀԿ–ն որոշում կայացրեց մայիսի 19–ին ապստամբությունը Իջևանի շրջանի Սևքար գյուղից սկսելու վերաբերյալ: Խախտելով որոշումը կամ տեղյակ չլինելով այդ մասին՝ Շամշադինն ապստամբեց մայիսի 14–ին[190]: Առանձին օջախներով գավառի տարածքով մեկ ապստամբական ելույթները, երբ բոլշևիկների կոչերին հետևեցին շատ գյուղացիներ ու հայկական բանակի 6–րդ գնդի շատ զինվորներ, շարունակվեցին մինչև հունիսի վերջերը՝ ավարտվելով դարձյալ պարտությամբ:

Ինչ վերաբերում է Զանգեզուրի գավառին, ապա այդտեղ ստեղծվել էր բարդ իրադրություն: Զանգեզուրի գյուղացիական զանգվածները՝ Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ, և մասամբ կանոնավոր բանակի զորամասերը՝ Դրոյի հրամանատարությամբ, ինքնապաշտպանական պայքար էին ծավալել մուսավաթական, ապա նաև Խորհրդային Ադրբեջանի դեմ, որը ձգտում էր զավթելու Զանգեզուրը և Ղարաբաղը: Ազատագրական պայքարը, փաստորեն, կանխում էր նաև բոլշևիկյան գործունեության ծավալումը գավառում: Զանգեզուրի բոլշևիկները և նրանց կազմակերպությունները՝ Հայաստանի կենտրոնից գավառի հեռավորության ու կտրվածության պատճառով կապված էին Ադրբեջանի հետ, որն իր հերթին բոլոր միջոցներով, այդ թվում՝ կաշառատվությամբ, ձգտում էր հայ բոլշևիկներին օգտագործելու իր նվաճողական նպատակներն իրականացնելու համար: Այդուհանդերձ 1920 թ. մայիսին Զանգեզուրում որևէ լուրջ ապստամբական ելույթ տեղի չունեցավ և չէր էլ կարող տեղի ունենալ:

1920 թ. մայիսին Հայաստանում բոլշևիկների բարձրացրած զինված ապստամբությունն ավարտվեց նրանց պարտությամբ: Բոլշևիկյան կազմակերպությունները հայտարարվեցին օրենքից դուրս: Բանտարկվեց մի քանի հարյուր մարդ, հիմնականում բոլշևիկներ: Զոհվեցին կամ գնդակահարվեցին ապստամբության մի շարք կազմակերպիչներ ու ղեկավարներ (Ս. Ալավերդյան, Ս. Մուսայելյան, Բագրատ Ղարիբջանյան, Եգոր Սևյան, Արշալույս Փանյան, Ա. Մելքոնյան, Ղ. Ղուկասյան, Հ. Սարուխանյան, Բատիկ Բատիկյան, Բագրատ Հարությունյան և ուրիշներ): Ոմանց հաջողվեց փախուստի դիմել:

Մայիսյան ապստամբությունը, չհաղթանակելով հանդերձ, պետությանը միայն վնաս հասցրեց՝ ապակայունացնելով նրա ներքին դրությունը: Բոլշևիկների ապստամբության հետ կապված՝ գոյություն ուներ նաև վտանգ պետության տարածքային ամբողջականության հարցում: Այդպիսի վտանգ կարող էր սպառնալ Զանգեզուրին և Ղազախ–Շամշադինին: Զանգեզուրի բոլշևիկները, հրահրելով ներքին պայքար երկրամասում, նպաստում էին Ադրբեջանին, որի շահերը տվյալ պահին պաշտպանում էր ռուսական կարմիր բանակը: Ինչ վերաբերում է Ղազախ–Շամշադինի շրջանին, ապա 1920 թ. հունիսին շրջանի բոլշևիկների պատվիրակությունը՝ Շ. Ամիրխանյան, Պողոսյան, Ղալթախչյան կազմով, մեկնելով Բաքու, հայտարարություն է ներկայացնում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին, որը տպագրվում է Բաքվի «Կոմունիստ» թերթում և արտատպվում «Յառաջ»–ում

[190] Տես Կարապետյան Հ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1961, էջ 210:



հուլիսի 28–ին: Դատապարտելով դաշնակցականների տիրապետությունը և ներկայացնելով մայիսի 15–ից շրջանի գյուղերում ծավալված ապստամբական շարժման մասին՝ ապստամբ գյուղացիության անունից հայտնվում էր, թե վերջինս «այլևս չի ցանկանում տանել հայ դաշնակցական կառավարության լուծը» և պատվիրակությանը պատվիրել է տեղեկացնել խորհրդային կենտրոնական իշխանությանը, որ պահանջում է «ապստամբած շրջանը միացնել Խորհրդային Ադրբեջանին կամ կարմիր բանակի ձեռքով գրավել և դաշնակներից պաշտպանել»:

Ապստամբության անկազմակերպվածությունը, անջատ–անջատ ելույթները, ընդհանուր ղեկավարության բացակայությունը և այլն չեն սպառում պարտության պատճառները: Հիմնական պատճառն այն է, որ առանց դրսի օգնության ապստամբությունը հաղթանակել չէր կարող, իսկ 1920 թ. մայիսին Խորհրդային Ռուսաստանը և նրա բանակը մտադիր չէին միջամտելու Հայաստանի խորհրդայնացմանը:

Մոսկվան տեղյակ էր Հայաստանում ծավալված բոլշևիկյան շարժումներին, բայց չէր մտածում իր միջամտության մասին, ավելին՝ գտնում էր, որ իրադրությունը թույլ չի տալիս դա անել: Նախ՝ խորհրդային ղեկավարության կարծիքով, Հայաստանում քաղաքական իրադրությունը ՀՅԴ օգտին էր, այսինքն՝ բացակայում էին ներքին պայմանները խորհրդայնացման համար: Այսպես՝ Գ. Չիչերինը 1920 թ. ապրիլի 28–ին Վ. Լենինին հղած նամակում, «Բաքվի գործերի կարգավորման պարզվելու» հետ կապված (հավանորեն նկատի ունի Ադրբեջանի խորհրդային հեղաշրջումը), անդրադառնալով «հենց իրենց ճանապարհին կանգնած» (առաջխաղացումը դեպի Թուրքիա) Հայաստանի հարցին, նշում է, որ հայ ժողովրդի վաղեմի ճնշված դրության և ուժեղ հայկական բուրժուազիայի առկայության հետևանքով «ամբողջ հայ ժողովրդի մեջ խոր կերպով ամրապնդվել է դաշնակցականների ազդեցությունը»: Նման պայմաններում, ըստ Գ. Չիչերինի, միայն հարկավոր է հասնել նրան, որ Հայաստանը չհակադրվի Ռուսաստանին, որ պետք էր շուտափույթ պայմանագիր կնքել նրա հետ, նրան հաց հատկացնել (նույն քաղաքականությունն էր մատնանշվում Վրաստանի նկատմամբ)[191]: Իսկ մայիսյան իրադարձությունների սկսվելուց հետո ևս քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ չէր փոխվում: Ռուսաստանի արտգործժողկոմի տեղակալ Լ. Կարախանի մայիսի 11–ի նամակում (Գ. Օրջոնիկիձեի անունով), որպես Վ. Լենինի հանձնարարություն, շեշտը դրվում էր Խորհրդային Ադրբեջանի ամրապնդման վրա՝ ավելացնելով, որ, իրապես, Հայաստանը Ռուսաստանի համար «առաջիկայի հետաքրքրություն չի ներկայացնում»: Նորից առաջ էր քաշվում Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու խնդիրը[192]: Իսկ մայիսի 23–ի հեռագրում Լ. Կարախանը հայտնում է Ի. Ստալինի կարծիքի մասին: Վերջինս Հայաստանում ստեղծված կացությունը բավարար չէր համարում «ամուր որոշում» կայացնելու համար և խնդրում էր լրացուցիչ տեղեկություններ: Ընդամենը 2 գնդի ապստամբների կողմն անցնելը Ի. Ստալինը երաշխիք չէր համարում, որ հայկական զորքի զգալի մասը կանցնի ռուսների կողմը: Իսկ ռուսական նոր զորամասերի առանձնացումը դիտվում էր որպես «բոլորովին անժամանակ», քանի որ, ինչպես նշվում է հեռագրում, ամեն ինչ տրամադրվելու էր Լեհական ճակատին: Ստեղծված պայմաններում առաջադրվում էր լուծել այլ խնդիր, այն է՝ ռուսական առկա ուժերով հասնել թուրքական սահմանին և կապ հաստատել Թուրքիայի հետ: Այդ նպատակով, ըստ Լ. Կարախանի, հարկավոր էր ստանալ Հայաստանի կառավարության համաձայնությունը, որ ռուսա-

[191] Տես Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 160, էջ 183:

[192] Տես նույն տեղում, վավ. 167, էջ 190:

կան զորամասերը զբաղեցնեն Հանրապետության Հայ–մուսուլմանական խառը բնակեցված շրջանները՝ «կանխելու ցանկացած սադրանք ու ազգային կոտորած»[193]:

Այդ ամենից հետո է, որ ընդունվեց ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի մայիսի 25–ի ոչ պատահական որոշումը: Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, նշված է որոշման մեջ, և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ նրա անմիջապես խորհրդայնացման նախաձեռնությունը[194]:

Դա, իհարկե, չէր նշանակում, թե Ռուսաստանը հրաժարվում էր Հայաստանը խորհրդայնացնելուց: Այն միայն ժամանակի ու մարտավարության հարց էր և հետաձգվում էր նպաստավոր պահի համար:

---

[193] Տե՛ս նույն տեղում, վավ. 169, էջ 194:

[194] Տե՛ս նույն տեղում, վավ. 170, էջ 194:

Աղբյուրը՝ *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 78-86: